Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Պտղնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Շախմատ»՝ 5 դասաժամ, «Ֆիզկուլտուրա»՝ 22 դասաժամ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1),
2. 1 լուսանկար՝ 3x4 չափի,
3. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ / դիպլոմ
4. Անձը հաստատող փաստաթուղթ,
5. << Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
6. Ինքնակենսագրություն / Ձև 5/,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենի հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 17-ից մինչև ապրիլի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 11:00–15:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 30-ին՝ ժամը 14:00-ին**, Կոտայքի մարզի Պտղնիի միջնակարգ դպրոցում՝ հասցե Կոտայքի մարզ գ. Պտղնի փողոց 2, շենք 2: Տեղեկությունների համար զանգահարել՝ (099)16-18-01, (094)16-12-01 հեռախոսահամարներով: